ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մարտի 2015 թվական N 34–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ-2 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում Գյումրի-2 սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի տեղակայման հարցը կարգավորելու նպատակով, հիմք ընդունելով Գյումրի-2 սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի պետ Էդվարդ Բաղրամյանի գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի փետրվարի 23-ի N 1917 թվագրմամբ) ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում Գյումրի-2 սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի տեղակայման նպատակով վարձակալելու Գյումրի քաղաքի Շահինյան փողոց N 8 հասցեում գտնվող, քաղաքացիներ Մկրտիչ և Արմենուհի Հակոբյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող շինությունը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական 2510889)՝ ամսական 56.000 (հիսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարով:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում Գյումրի-2 սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի պետ Էդվարդ Բաղրամյանին օրենքով սահմանված կարգով կնքել շինության վարձակալության պայմանագիր:

Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«25» մարտի 2015 թ.